«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Խ-424-17.12.2019-ՏՏԳԲ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ սկզբունքային առարկություն չունի:

Միաժամանակ առաջարկում ենք՝

1) նախագծի 1-ին հոդվածը «ոչ ավելի, քան 6 ամիս ժամկետով:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Եթե հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ապա ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ 3 ամիս ժամկետով:»:

Սույն առաջարկությունը բխում է պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին օրենսդրության իրավակարգավորումներից, որտեղ առկա է համանման դրույթ.

2) նախագծի 2-րդ հոդվածը խմբագրել՝ նախատեսելով իրավակարգավորում նաև մինչև 6 ամիս փաստացի աշխատած անձանց հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ: